ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

ԲԱՀԱՅԻՆԵՐԻ ՏՈՄԱՐԸ, ՍՈՒՐԲ ՕՐԵՐԸ ԵՎ 19-ՐԴ ՕՐՎԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտնի է, համաշխարհային կրոնները՝ քրիստոնեությունը, բուդդայականությունը, մահմեդականությունը, ունեն իրենց ուրույն տոմարը: Նորագույն կրոններից մեկը՝ բահայականությունը, ևս ստեղծել է իր տոմարը, որով ներկայումս առաջնորդվում են աշխարհի տարբեր երկրներում բնակվող ավելի քան 6,5-7 միլիոն բահայիները: Մեզանում բահայիների առաջին ուսումնասիրողներից մեկը՝ Հրաչյա Աճառյանը նշում է, որ. «Բեհա-Ուլլահը այնքան է առաջ գնացել, որ այն, ինչ չի կարողացել փոխել ֆրանսիական հեղափոխությունը, ինքը փոխում է. դա է ամիսների կազմությունը և տոմարը»[1]: Աճառյանից առաջ Մարպետը բաբիզմին և բահայիզմին նվիրված իր ուսումնասիրության մեջ ընդամենը մեկ նախադասությամբ է անդրադարձել տոմարին[2]: Բահայական թվարկությունը սկսվում է 1844 թվականից՝ իր առաքելության մասին Բաբի ավետումից[3], և ըստ այդմ, ներկայիս 2002թ. համապատասխանում է բահայիների 158-159 թթ.:

Բահայականությունը (բահայի հավատքը) ծնունդ է առել 19-րդ դ-ում Պարսկաստանում: Այն ծագել է Բաբի ուսմունքից: Մեյեդ Ալի Մոհամմադը (1819[4]-1850), որն իրեն անվանում է «Բաբ» (արաբերեն «դուռ», «դարպաս»), 1844թ-ի մայիսի 23-ին[5] հայտարարում է, որ ինքն է այն ավետվածը, որին փնտրում են շեյխիները: Նա ասում է, որ ինքը Աստծո պատգամաբերն է և Հիսուսի, Մուհամմեդի և նրանց նախորդների առաքելության շարունակողը: Դրանից հետո Բաբը իր հետևորդներին ուղարկում է երկրի տարբեր կողմեր՝ ավետելու ուրիշ, ավելի մեծ պատգամաբերի՝ «նրա, ում ի հայտ կբերի Աստված» մոտալուտ գալուստը: Բաբն իր վարդապետության պատճառով ենթարկվում է հալածանքների և հրապարակայնորեն գնդակահարվում 1850թ.[6] հուլիսի 9-ին Թավրիզում:

Բաբի մահվանից հետո նրա գործը շարունակում է նրա աշակերտներից մեկը՝ Միրզա Հուսեյն Ալին, որն իրեն անվանում է Բահաուլլահ (1817-1892): Թեհրանում բանտարկվելուց հետո աքսորվելով Բաղդադ, Ռիդվան այգում (արաբ. ռիդվան՝ դրախտ) նա 1863թ. ապրիլի 21-ին

հրապարակայնորեն հայտարարում է իր առաքելության մասին, որ ինքն այն ավետվածն է, որի գալստյան մասին պատգամել էր Բաբը: Նրա մահից հետո, կտակի համաձայն, ավագ որդի Աբբաս Էֆենդին (1844-1921), որը ուներ Աբդուլ-Բահա տիտղոսը, նշանակվեց Բահաուլլահի ժառանգորդ, նրա ուսմունքի մեկնաբան, գործի շարունակող[7]: Աբդուլ-Բահայի մահից հետո նրա ավագ թոռ Շողի Էֆենդին (1897-1957) ճանաչվեց բահայի հավատքի պահապան և «Քիթաբ-ի-Ակդասի»[8] մեկնաբան: Նրա ղեկավարման ժամանակ կազմավորվեց բահայիների վարչական կարգը: Ներկայումս հավատի գերագույն մարմինը Արդարության համաշխարհային տունն է, որը հիմնադրվել է 1963թ., և գտնվում է Իսրայելի Հայֆա քաղաքում:

Բաբը, լինելով նոր կրոնի հիմնադիրը, սահմանեց նոր տոմար, որը հայտնի է Բադի[9] կամ Բահայի օրացույց անուններով: Ըստ Բաբի ստեղծած օրացույցի տարին կազմված է 19 ամսից, յուրաքանչյուրը՝ 19 օրից[10]: Լրիվ տարվա համար չի բավականացնում 4 օր (նահանջ տարում՝ 5): Բաբը իր նոր օրացույցի մեջ չի սահմանել այս օրերի ճիշտ տեղը: Բահաուլլահը «Քիթաբ-ի-Ակդասում» այդ օրերին տվել է անվանում և սահմանել նրանց հաջորդականությունը. «Օրերը, որոնք մնում են ամիսներից, թող դրվեն Ծոմի ամսից առաջ: Մենք այդպես ենք արել, որպեսզի նրանք բոլոր գիշերների և ցերեկների միջև լինեն որպես «Հա» տառի դրսևորումներ...»[11]: Այն հավելյալ՝ նշանակովի կամ միջանկյալ օրերը, կոչվում են Այամ-ի-Հա[12] (արաբերենից թարգմանվում է Հա-ի օրեր[13]), և դրվում են 18-րդ (Մուլք-իշխանություն) ամսվանից հետո և 19-րդ ամսից (Ալա-վսեմություն) առաջ: Այսպիսով, բահայական օրացույցը համապատասխանեցվում է արեգակնային տարվան: Բահաուլլահը պատվիրել է, որ այս օրերը լինեն հյուրասիրության, տոնակատարության, ուրախության և բարեգործության օրեր. «Այս օրերին բահայիներին վայել է կազմակերպել լավ հյուրասիրություն՝ իրենց և իրենց հարազատների համար, և բացի նրանցից՝ նաև աղքատների և կարիքավորների համար և ուրախությամբ ու ցնծությամբ ողջունել և փառաբանել Ձեր Տիրոջը, գովերգել և մեծարել Նրա անունը...»[14]:

Այամ-ի-Հան սկսվում է փետրվարի 26-ին և տևում մինչև մարտի 1-ը ներառյալ: Այամ-ի-Հա-ին նվիրված Բահաուլլահի աղոթքում մասնավորապես գրված է. «Աստված, ի՛մ Բոց և ի՛մ Լույս: Ահա սկսվեցին օրերը, որոնց Դու Քո Գրքում անվանել ես Այամ-ի-Հա, ով Անվանումների Արքա, եւ մոտ է պասը՝ (իմա՝ ծոմը-Գ.Վ.) հրահանգված Քո Վեհագույն Գրչով, նախատեսված բոլորի համար, ով Քո արարչագործման Թագավորությունում է»[15]:

Բաբը իր «Բայան»[16] (պարսկերեն «Հայտնություն», «Մեկնություն») գրքում Ալա ամիսը սահմանել է որպես ծոմի ամիս, որը տևում է մարտի

2-ից մինչև մարտի 20-ը ներառյալ: Ծոմապահության ընթացքում հավատացյալները պետք է արևածագից մինչև մայրամուտ հրաժարվեն սննդից, ջրից և ծխախոտից[17]: Բահաուլլահի աղոթքներում ծոմի համար նույնպես կա հատուկ աղոթք, որտեղ մասնավորապես ասվում է. «Տե՛ր իմ, ահավասիկ այն օրերը, որ Դու հրամայել ես Քո ծառաներին պաս պահել: Երանավետ է նա, ով ամբողջովին պահպանում է պասը (իմա՝ ծոմը -Գ.Վ.) հանուն Քեզ հ ի լիովին հրաժարվելով ամենից, Քեզանից բացի: Օգնիր ինձ և նրանց, ով Տեր, հնազանդվել Քեզ և հետևել Քո պատվիրաններին»[18]:

Ըստ Շողի Էֆենդիի ծոմի ժամանակահատվածը «... իր էությամբ խորհելու և աղոթքների ժամանակ է, հոգևոր վերածննդի ժամանակաշրջան, երբ հավատացյալը պետք է ձգտի իր ներքին կյանքում անհրաժեշտ փոփոխությունների իրականացմանը, նրա հոգում ննջած հոգևոր ուժերի վերականգնման և ամրապնդման: Այսպիսով, իր իմաստով և նշանակությամբ ծոմը հանդիսանում է խորը հոգևոր օրենք: Ծոմը խորհրդանշական հիշեցում է եսասիրության և մարմնական ցանկությունների հաղթահարման անհրաժեշտության մասին»[19]:

Ծոմից ազատվում են մինչև 15 և 70-ից բարձր տարիք ունեցողները, հղի և կերակրող կանայք, ծանր աշխատանք կատարողները, հիվանդները և ճամփորդողները[20]: Շողի Էֆենդին ավելացրել է, որ չնայած ճանապարհորդության մեջ գտնվողները ազատվում են ծոմից, սակայն նրանք, ըստ իրենց ցանկության, կարող են ծոմ պահել: Նա նաև պատվիրել է, որ աշխատանքի տեսակները, որոնք ենթադրում են ծոմից ազատում, որոշի Արդարության համաշխարհային տունը[21]:

Ծոմին հաջորդում է բահա ամիսը, որն ըստ բահայի օրացույցի տարվա առաջին ամիսն է: Ամեն ամսվա առաջին օրը նույնպես կոչվում է բահա[22]: Բաբը 19 ամիսներին տվել է արաբերեն անուններ[23], որոնք արտահայտում են Աստծո որոշ հատկանիշներ.

1. Բահա (վեհություն)	մարտի 21 - ապրիլի 8
2. Ջալալ (փառք)	ապրիլի 9 - ապրիլի 27
3. Ջամալ (գեղեցկություն)	ապրիլի 28 - մայիսի
4. Ազամաթ (հիասքանչ)	մայիսի 17 - հունիսի 4
5. Նուր (լույս)	հունիսի 5 - հունիսի 23
6. Ռահմաթ (գթություն)	հունիսի 24 - հուլիսի 12
7. Քալիմաթ (բառեր)	հուլիսի 13 - հուլիսի 31
8. Քամալ (կատարելություն)	օգոստոսի 1 - օգոստոսի 19
9. Ասմա (անուններ)	օգոստոսի 20 - սեպտեմբերի 7
10. Ի'զզա (զորություն)	սեպտեմբերի 8 - սեպտեմբերի 26
11. Մաշիիյա (կամք)	սեպտեմբերի 27 - հոկտեմբերի 15
12. Իլմ (գիտություն)	հոկտեմբերի 16 - նոյեմբերի 3

13. Կուդրաթ (ուժ)	նոյեմբերի 4 - նոյեմբերի 22
14. Կաուլ (խոսք)	նոյեմբերի 23 - դեկտեմբերի 11
15. Մասաիլ (հարցեր)	դեկտեմբերի 12 - դեկտեմբերի 30
16. Շարաֆ (պատիվ)	դեկտեմբերի 31 - հունվարի 18
17. Սուլտան (տիրապետություն)	հունվարի 19 - փետրվարի 6
18. Մուլք (իշխանություն)	փետրվարի 7 - փետրվարի 25
Նշանակովի օրեր	փետրվարի 26 - մարտի 1
19. Ալա (վսեմություն)	մարտի 2 - մարտի 20:

Շաբաթվա յուրաքանչյուր օրը ևս ունի իր անվանումը[24], որը նույնպես Աստծո որոշ հատկանիշների բնութագրումն է.

Երկուշաբթի՝	Քամալ (կատարելություն)
Երեքշաբթի՝	Ֆաղլլ (գթասրտություն)
Չորեքշաբթի՝	Աղլլ (արդարություն)
Հինգշաբթի՝	Իսթիջլալ (վեհություն)
Ուրբաթ՝	Իսթիկլալ (անկախություն)
Շաբաթ՝	Ջալալ (փառք)
Կիրակի՝	Ջամալ (գեղեցկություն)

Հետաքրքրական է, որ բահայիների օրը սկսվում է արևամուտից և տևում մինչև հաջորդ օրվա մայրամուտը[25]:

Բահա ամսվա առաջին օրը՝ մարտի 21-ը, բահայիների Նոր տարին է՝ Նովրուզը: Բահաուլլահը «Քիթաբ-ի-Ակդասում» այդ օրվա մասին գրում է. «Երջանիկ է նա, ով մտնում է Բահա ամսվա առաջին օրը... Ճշմարտապես, այս օրը բոլոր ամիսների պսակն ու նրանց ակունքն է, օր, երբ կյանքի շունչը փչում է յուրաքանչյուր արարչագործության վրա: Անսահման երջանիկ է նա, ով ողջունում է այն փայլի և ուրախության մեջ»[26]: Նա նաև Նովրուզին նվիրված աղոթք ունի. «Գովք Քեզ, օ՛ իմ Աստված, այն բանի համար, որ Նովրուզը ղարձրեցիր տոն բոլոր նրանց համար, ովքեր պաս (իմա՝ ծոմ-Գ.Վ.) են պահում հանուն Քո սիրո եւ ովքեր ձեռնպահ են մնում այն ամենից, ինչը հակառակ է Քեզ: Թո՛ղ, ո՛վ Աստված, Քո սիրո հուրը և Քո կողմից սահմանված պասի (իմա՝ ծոմ-Գ.Վ.) տապը բոցավառի նրանց՝ հանուն Քո Գործերի և արքնացնի՝ զովերգելու և հիշատակելու Քեզ»[27]: 1997թ. Երևանում տպագրված Արամ Մարգսյանի «Հոգևոր ճնշման ճիրաններում» գրքում հեղինակը գրել է, որ բահայիների տարին սկսվում է մարտի 19-ից[28], սակայն ինչպես արդեն նշել ենք, այն սկսվում է մարտի 21-ից՝ գարնանային գիշերահավասարից:

Բահայական հավատում գոյություն ունեն 9 սուրբ օրեր[29], որոնց ընթացքում չպետք է աշխատել և օրը նվիրել աղոթքներին և սուրբ գրությունների ընթերցանությանը.

1. Նոր տարի (Նովրուզ)	մարտի 21
2. Ռիդվանի առաջին օր	ապրիլի 21

3. Ռիդվանի իններորդ օր ապրիլի 29
4. Ռիդվանի տասներկուերորդ օր մայիսի 2
5. Բաբի հայտնության օր մայիսի 23
6. Բահաուլլահի համբարձման օր մայիսի 29
7. Բաբի նահատակության օր հուլիսի 9
8. Բաբի ծննդյան օր հոկտեմբերի 20
9. Բահաուլլահի ծննդյան օր նոյեմբերի 12:

Ի հիշատակ Աբդուլ-Բահայի նշվում է ևս երկու տարելից[30], չնայած այդ օրերին աշխատանքը չի դադարեցվում.

Պատգամի օր նոյեմբերի 26
Աբդուլ-Բահայի մահվան տարելից նոյեմբերի 28:

Նովրուզը, Ռիդվանը (Ռիդվանի առաջին, իններորդ և տասներկուերորդ օրերը), Բաբի և Բահաուլլահի ծննդյան օրերը, ինչպես նաև Բաբի հայտնության օրը, որը համընկնում է Աբդուլ-Բահայի ծննդյան օրվան, բահայիների համար հանդիսանում են մեծ ուրախության և տոնի օրեր: Բաբի նահատակման, ինչպես նաև Բահաուլլահի և Աբդուլ-Բահայի համբարձման օրերը ամեն տարի նշվում են հավաքույթներով, կարդացվում են աղոթքներ և հատվածներ սուրբ գրություններից:

Հրաչյա Աճառյանը «Կյանքիս հուշերում» գրքում մի փոքր անդրադարձել է բահայիների տոմարին և գրել, որ բահայիների տոներից մեկը՝ Բաբի հայտնության օրը, 1844թ. մայիսի 23-ը, զուգադիպում է Բեհա-Ուլլահի ծննդյան օրվան[31]: Սակայն Բաբի հայտնության օրը համընկնում է ոչ թե Բահաուլլահի, այլ նրա որդու և գործի շարունակողի՝ Աբդուլ Բահայի ծննդյան օրվան: Ա. Մարգսյանը նույնպես իր վիրոնշյալ գրքում գրում է, որ բահայիների տոներից մեկը՝ Բահաուլլահի ծննդյան օրը, նշվում է մայիսի 23-ին[32], սակայն, ինչպես արդեն նշեցինք, մայիսի 23-ը Բաբի հայտնության և Աբդուլ Բահայի ծննդյան օրն է, իսկ Բահաուլլահի ծննդյան օրը 1817թ. նոյեմբերի 12-ն է: Ըստ Ա. Մարգսյանի, բահայիների տոներից առաջինը սկսվում է ապրիլի 24-ին[33], սակայն բահայիների մեծագույն տոնը՝ Ռիդվանը, սկսվում է ոչ թե ապրիլի 24-ին, այլ ապրիլի 21-ին: «Իրանագիտության հարցեր» ժողովածուում Հ. Փահլևանյանը «Բաբիզմը որպես իմպերիալիզմի գաղափարախոսություն»[34] իր հոդվածում գրում է, թե Բահաուլլահը 1867թ. է իրեն հայտարարում այն նոր մարգարեն, որի հայտնությունը գուշակել էր Բաբը, ինչը գուցե վրիպակի արդյունք է: Ինչպես արդեն նշել ենք, Բահաուլլահն իր առաքելության մասին հայտնել է 1863թ. Բաղդադի Ռիդվան այգում: Վերապատվելի Հերոլտ Հասեսյանն իր «Աղանդներ՝ քրիստոնեական ճշմարտութեան պրիսմակէն» (Բեյրութ, 1992) գրքի բահայականության վերաբերյալ գլխում գրում է, որ Բաբի իսկական անունը Միրզա Հուսեյն Ալի[35] է, այնինչ դա Բահաուլլահի անունն է, իսկ Բաբի անունը Սեյեդ Ալի Մոհամ-

մադ է: Նա շփոթել է նաև Բաբի ծննդյան թիվը և վայրը, նշելով 1817թ. Թեհրան[36]: 1817թ. Թեհրանում ծնվել է Բահաուլլահը, իսկ Բաբը ծնվել է 1819թ.՝ Շիրազում:

Բահայիների մեծագույն տոնը Ռիդվանն է, այսինքն այն տասներկու օրերը, որոնց ընթացքում Բահաուլլահն ավետեց իր առաքելության մասին: Բահաուլլահն իր ավետումն անվանել է «Բարձրագույն երանության օր»[37] և այն ամեն տարի նշվում է որպես 12-օրյա Ռիդվանի տոն, որը Շոգի Էֆենդին անվանել է «բահայի տոներից ամենասուրբը և նշանակալիցը»[38]: Այս տոնի ընթացքում են տեղի ունենում բահայիների Հոգևոր ժողովների ընտրությունները:

Բահայական օրացույցի յուրաքանչյուր ամսվա առաջին օրը բահայիները հավաքվում են և նշում 19-րդ օրվա տոնակատարությունը, որը կազմում է բահայիների վարչական կարգի մի մասը:

Բաբը «Բայան» գրքում այս հանդիպումների մասին գրել է, որ հավատացյալները 19 օրը մեկ անգամ պետք է հավաքվեն, որպեսզի ցուցաբերեն հյուրասիրություն և բարեկամություն[39]:

Աբդուլ-Բահան գրել է, որ «եթե այս տոնակատարությունը անցկացվի ինչպես հարկն է, ապա 19 օրը մեկ անգամ բարեկամները հոգեպես կվերածնվեն և կօժտվեն ուժով, որը տրվում է ի վերուստ»[40]: Շոգի Էֆենդին 19-րդ օրվա տոնակատարությունը վերածեց հավատի ինստիտուտի և նրա հոգևոր և հասարակական (սոցիալական) մասերին ավելացրեց նաև վարչական մասը, որի ժամանակ անցկացվում են խորհրդակցություններ[41]:

Ամբողջ տոնը բաղկացած է երեք մասերից: Առաջին մասում կարդացվում են աղոթքներ և հատվածներ բահայիների սուրբ գրվածքներից, ինչպես նաև այլ կրոնների սուրբ գրքերից՝ օրինակ Աստվածաշնչից, Ղուրանից[42]: Սակայն հետագայում Շոգի Էֆենդին նշում է, որ քանի որ հավատացյալները հավաքվում են միասին ավելի խորը հասկանալու իրենց հոգևոր ուսմունքը, նախընտրելի է տոնի աղոթքի մասում ընթերցել հատվածներ բահայի հավատքի սուրբ գրվածքներից[43]: Ինչպես աղոթքի մասում, այնպես էլ տոնի մյուս բաժիններում կարող են հնչել երաժշտություն, Բաբի, Բահաուլլահի և Աբդուլ-Բահայի գրվածքների հիման վրա գրված երգեր[44]: Երկրորդ մասում բոլոր հավատացյալները քննարկում են համայնքի գործերը, անցկացնում խորհրդակցություն: Նրանք կարող են առաջարկներ անել, հարցեր տալ: Տեղական Հոգևոր ժողովի ներկայացուցիչը ներկայացնում է իրենց ընդունած որոշումները, կարդացվում են Արդարության համաշխարհային տան ուղերձները և նամակները: Տեղական Հոգևոր ժողովի գանձապահը ներկայացնում է հաշվետվություն, որից հետո կատարվում է գաղտնի հանգանակություն, որը գրանցվում է և օգտագործվում համայնքի կարիքների համար: Եզրա-

փակիչ մասը նվիրվում է հյուրասիրությանը և ընկերների հետ շփմանը: Կարող են ցուցադրվել փոքրիկ ներկայացումներ, կազմակերպվել խաղեր և այլ զվարճություններ:

Սկզբնապես 19-րդ օրվա տոնակատարությունը նախատեսված էր միայն բահայիների համար, քանի որ ոչ բահայիների մասնակցությունը հատկապես նրա խորհրդակցական մասին, հակասում էր վարչական կառույցի գործունեությանը, որի համաձայն ոչ բահայիները չեն հրավիրվում տոնակատարությանը[45]: Սակայն հետագայում Արդարության համաշխարհային տունը Ավստրալիայի Ազգային հոգևոր ժողովին ուղղած իր նամակում գրում է, որ «Եթե ոչ բահայի այդուհանդերձ ներկա է գտնվում տոնին, ապա չի կարելի խնդրել նրան թողնել հանդիպումը, ընդհակառակը, Հոգևոր ժողովը պետք է չեղյալ հայտարարի տոնի խորհրդակցական մասը և հյուրընկալությամբ ողջունի ոչ բահայուն»[46]: Այսպիսով, քանի որ այս տոնը համայնքի փակ, ներքին իրադարձություն է, ոչ բահայիները չեն կարող մասնակցել խորհրդակցական մասին, իսկ մյուս երկու մասերին՝ հոգևոր և հասարակական, կարող են մասնակցել:

Այն բահայիները, որոնք պատկանում են ուրիշ համայնքի, սակայն հյուր են այս տոնին, կարող են մասնակցել երեք մասերին, սակայն քվեարկելու իրավունք չունեն:

Շոգի Էֆենդին իր նամակներից մեկում 19-րդ օրվա տոնակատարության հաճախումը պարտադիր չի համարում, սակայն նշում է, որ այն շատ կարևոր է, և յուրաքանչյուր հավատացյալ իր մասնակցությունը այդպիսի հանդիպումներին պետք է համարի «իր պարտքն ու առավելությունը»[47]: Նա այս հանդիպումների նշանակության մասին գրում է, որ դրանք «...ոչ միայն հոգեկան ազդեցություն են ցուցաբերում, այլև հանդիսանում են կենսական անհրաժեշտ միջոց պահպանելու սերտ և մշտական կապ տեղական համայնքի հավատացյալների, ինչպես նաև հավատացյալների և նրանց ընտրական մարմնի անդամների միջև»[48]:

Տոնակատարության անցկացման համար ընտրվում է նախագահ, որը կարող է լինել 21 տարեկանից բարձր յուրաքանչյուր հավատացյալ: Նույնիսկ այս տոնակատարության ամեն մի մասի համար կարող են ընտրվել տարբեր նախագահներ: Այս հանդիպումները անցկացնելու համար պատասխանատու է Տեղական հոգևոր ժողովը[49], և այն վայրում, որտեղ չկա Տեղական հոգևոր ժողով, 19-րդ օրվա տոնակատարությունը պաշտոնական վարչական նշանակություն չի ունենում և հավատացյալները կարող են մասնակցել մոտակա վայրում գտնվող Տեղական հոգևոր ժողով ունեցող համայնքում տեղի ունեցող տոնակատարությանը: Հայֆայում՝ Արդարության համաշխարհային տանը, պաշտոնապես այս հանդիպումները տեղի չեն ունենում, քանի որ այնտեղ Տեղական հոգևոր ժողով չկա:

Հայաստանում 1992թ. նույնպես կազմավորվել է բահայիների համայնք, որը 1994թ. ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդում գրանցվել է որպես «Երևանի բահայիների համայնք», այնուհետև «Հայաստանի Բահայիների համայնք» անվամբ գրանցվել է 1996, 1998 և 2000թթ.:

Հայաստանի բահայիների թիվը ըստ Ազգային Հոգևոր ժողովի կողմից ներկայացվող տվյալների 1998թ.՝ 210, 1999թ.՝ 500, 2000թ.՝ 452, 2001թ.՝ 350-400: Ի դեպ, համայնքում բացի հայերից կային նաև Հայաստանի որոշ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: 2000թ. Հոգևոր ժողովների ընտրություններում ընտրվել է 23 Տեղական Հոգևոր ժողով (1997թ.՝ 17): 2001թ. ապրիլի 21-ի ընտրություններին ընտրվել է 15 Տեղական հոգևոր ժողով (Երևան, Գյումրի, Ապարան, Էջմիածին, Արմավիր, Ստեփանավան, Արթիկ, Գորիս, Կապան, Թալին, գ.Արդանիշ, գ.Ուռուտ, գ.Սիլիք, գ.Քերքառատ, գ.Նիգավան): 2002թ., ըստ մեր դիտարկումների, համայնքը զգալիորեն կրճատվել է և ընտրվել է 5 Տեղական Հոգևոր ժողով (Երևան, Գյումրի, Ապարան, Արմավիր, Ստեփանավան):

Հայաստանի բահայիները, ինչպես աշխարհի իրենց հավատակիցները, նույնպես նշում են բահայական վերոնշյալ տոները և սուրբ օրերը:

VARDANYAN GOHAR

THE BAHAI'S CALENDAR, HOLY DAYS AND NINETEEN DAY FEAST

(Summary)

The world religions such as Christianity, Buddism and Islam have their own calendars. One of the modern religions - Baha'i faith, has also created its own calendar by which about 6.5 - 7 million Bahais are led. The Baha'i faith has originated in Iran in 19-th century by Baha'u'llah, one of the followers of Bab.

According to the new calendar established by Bab /which is known as Badi or Baha'i calendar/ the year is comprised of 19 months, each month is comprised of 19 days. There are 9 holy days in Baha'i faith. On each first day of the month the Bahais meet and celebrate the Nineteen Day Feast.

In 1992 the Armenian Baha'i community was emerged in Armenia. The Bahais of Armenia like the other followers of the Bahai faith in the world also celebrate the Bahai feasts and holy days.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 384:
2. Ատրպետ, Իմամաթ, Ալեքսանդրապոլ, 1906, էջ 61:
3. Momen W., A basic baha'i dictionary, Oxford, 1991, p. 35, 49; Перкинс М., Хейнсворт Ф., Вера бахаи, Москва, 1992, с. 81; Эсслемонт Дж. Э, Баха-

Улла и новая эра, Екатеринбург, 1991, с. 176; Составитель Дустдар Ф., Новые духовные ценности, Учение бахаи, Москва, 1992, с. 215.

4. Հիմնականում Բաբի ծննդյան թիվը նշված է 1819թ. հոկտեմբերի 20-ը, իսկ որոշ աղբյուրներում Иванов М., С., Антифеодальные восстания в Иране в середине XIX в., Москва, 1982, стр. 90 նշված է 1920թ. հոկտեմբերի 9-ին; Ислам, Энциклопедический словарь, Москва, 1991; стр. 33; Encyclopedie de l'islam, tome I, Paris, 1960, p. 856, երկու թիվն էլ ընդունում է:
5. Հիմնականում Բաբի հայտնության օրը գրված է 23 մայիսի 1844թ., իսկ Батюшковъ Г., Бабиды, Персидская секта, "Вестникъ Европы", Санктпетербургъ, 1897, стр. 339, Кузнецова Н. А., Иран в первой половине XIX века, Москва, 1983, стр. 203, նշված է 12 մայիսի 1844թ.:
6. Ислам, Энциклопедический словарь, Москва, 1991, стр. 33, գրված է, որ Բաբը մահապատժի է ենթարկվել 1847թ. հուլիսի 9-ին, այնինչ Բաբը մահապատժի է ենթարկվել 1850թ. հուլիսի 9-ին:
7. Завет, Санкт-Петербург, 1997, стр. 12.
8. «Քիթաբ ալ - Ակդաս» արաբերեն «Ամենասուրբ գիրք», բահայիների սուրբ գիրքն է, որը Բահաուլլահը գրել է 1873թ.՝ Աքքայում, արաբերեն լեզվով:
9. պարսկերեն նշանակում է հրաշալի, շքեղ, նորույթ, նորահնար, Նալբանդյան Գ. Մ., Պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, 1987, էջ 81:
10. Бахаулла, Китаб-и-агдас, Санкт-Петербург, 1998, с. 85, 218.
11. Бахаулла, Китаб-и-агдас, с. 41.
12. Там же, с. 41, 219.
13. Արաբական այբուբենի այս տառը արջաղ համակարգում ունի «հինգ» թվային նշանակությունը: Նաև Սուրբ գրություններում «Հա» տառին տրվում է հոգևոր նշանակություններ, որոնցից է «Աստծո էություն» նշանակությունը:
14. Там же, с. 41.
15. Հաղորդություն Աստծո հետ, Երևան, 1996, էջ 65; Молитвы бахаи, открытые Бахауллои, Бабом, Абдул-Баха, Алматы, 1998, с. 131:
16. Բաբի գրած օրենքների գիրքն է, որը նա գրել է պարսկերեն և արաբերեն:
17. Бахаулла, Китаб-и-агдас, с. 42, 221.
18. Հաղորդություն Աստծո հետ, էջ 68; Молитвы бахаи, с. 133:
19. Бахаулла, Китаб-и-агдас, с. 216.
20. Там же, с. 39, 42, 220; Перкинс М., Хейнсворт Ф., Вера бахаи, с. 46.
21. Бахаулла, Китаб-и-агдас, с. 220.
22. Там же, с. 285.
23. Yarshater E., Encyclopaedia Iranica, London and New York, 1989, Volume III, p. 446; Momen W., A basic baha'i dictionary, p. 158; Faizi G., The Baha'i Faith, New Delhi, 1990, p. 105; Эсслемонт Дж. Э, Баха-Улла и новая эра, с. 176.
24. Momen W., A basic baha'i dictionary, p. 65; Гувьон К., Жувьон Ф., Садовники господа, Санкт-Петербург,1993, с. 105.
25. Бахаулла, Китаб-и-агдас, с. 217; Momen W., A basic baha'i dictionary, p. 49, 65; Перкинс М., Хейнсворт Ф., с. 82; Гувьон К., Жувьон Ф., с. 103.
26. Бахаулла, Китаб-и-агдас, с. 80.
27. Հաղորդություն Աստծո հետ, էջ 68; Молитвы бахаи, с. 135:
28. Սարգսյան Ա., Հոգևոր ճնշման ճիրաններում, Երևան, 1997, էջ 29:

29. Бахаулла, Китаб-и-агдас, с. 284; Momen W., A basic baha'i dictionary, p. 103; Yarshater E., Encyclopaedia Iranica, p. 447.
30. Бахаулла, Китаб-и-агдас, с. 285; Faizi G., The Baha'i Faith, New Delhi, 1990, p. 118; Բահայական համայնքը, հիմունքները, նպատակները և մտադրությունները, Երևան, 1996, էջ 14:
31. Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 384:
32. Սարգսյան Ա., Հոգևոր ճնշման ճիրաններում, Երևան, 1997, էջ 29:
33. Նույնը, էջ 29:
34. Իրանագիտության հարցեր, Ա մատենաշար, Երևան, 1978, էջ 42:
35. Հասէսեան Հ., Աղանդներ՝ քրիստոնէական ճշմարտութեան պրիսմակէն, էջ 315:
36. Նույնը, էջ 315:
37. Бахаулла, Китаб-и-агдас, с. 267.
38. Там же, с. 268.
39. Там же, с. 252.
40. Абдул-Баха, Избранное из писании, Санкт-Петербург, 1995, с. 83.
41. Бахаулла, Китаб-и-агдас, с. 253.
42. Праздник Девятнадцатого дня, Сборник цитат из Писаний Бахауллы, Абдул Баха, Шоги Эффенди, Дома Справедливости, Санкт-Петербург, 1994, с. 36.
43. Там же, с. 37.
44. Там же, с. 37, 38.
45. Там же, с. 29, 31.
46. Там же, с. 31.
47. Бахаулла, Китаб-и-агдас, с. 253.
48. Праздник Девятнадцатого дня, с. 25.
49. Ռեյհանի Ֆ., Վարչական կարգը, Երևան, 1996, էջ 71: